«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 80/2

29-ը մարտի 2025 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի **2024թ. մարտի 16-ի նիստի թիվ 72/7 որոշմամբ** հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգում փոփոխություններ կատարելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի **2024թ. մարտի 16-ի նիստի թիվ 72/7 որոշմամբ** հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 3-րդ մասի (**ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ**) 21.-րդ կետում՝ (Մրցույթին մասնակցելու համար դասախոսները Հանձնաժողովին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը) ավելացնել 11-րդ ենթակետ.

   11.ընթացիկ ուսումնական տարում իրականացրած առնվազն երկու ակնարկային/թեմատիկ դասախոսությունների վերաբերյալ տեղեկանք Ուսումնամեթոդական վարչության կողմից:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման և հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2024թ. մարտի 16-ի նիստի թիվ 72/7 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

(3 –մասի 21-րդ կետի 11-րդ ենթակետը ավելացվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2025թ. մարտի 29-ին հարցման միջոցով անցկացված նիստի 80/2 որոշմամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման կարգը, որի նպատակն է նպաստել դասավանդման մեթոդների կատարելագործմանը, արդի մեթոդների կիրառմանը և լավագույն փորձի տարածմանը:

2. Սույն կարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունների, ԵՊՀ համապատասխան կարգի, ԵՊՀ ԻՄ-ի 2022-2026 զարգացման ռազմավարական ծրագրի, Կրթության բնագավառում ԵՊՀ ԻՄ քաղաքականության հիման վրա:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է տարեկան մեկ անգամ։

4. Մրցույթն անց է կացվում 4 անվանակարգերում.

1) «Կիրառական արվեստ» (մասնակից ստորաբաժանում՝ Կիրառական արվեստի ֆակուլտետ) մասնագիտությունների անվանակարգ՝ 1 մրցանակ,
2) «Բնական գիտություններ» (մասնակից ստորաբաժանում՝ Բնական գիտությունների ֆակուլտետ) մասնագիտությունների անվանակարգ՝ 1մրցանակ,
3) «Հումանիտար գիտություններ» (մասնակից ստորաբաժանում՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետ) մասնագիտությունների անվանակարգ՝ 1 մրցանակ,
4) «Տնտեսագիտություն» (մասնակից ստորաբաժանում՝ Տնտեսագիտության ֆակուլտետ) մասնագիտությունների անվանակարգ՝ 1 մրցանակ։

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի հաղթող համարվում է այն անձը, ով վերոնշյալ 1-4 անվանակարգերում մրցանակակիր է ճանաչվել ամենաբարձր միավորներով։

6. Յուրաքանչյուր անվանակարգում մրցույթ անցկացնելու և մրցանակակրին ընտրելու համար ձևավորվում է առանձին մասնագիտական մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)։

7. Մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ ԻՄ-ում դասավանդողները, ովքեր տվյալ ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ ԻՄ-ում դասավանդում են առնվազն 2 մասնագիտական դասընթաց։ Հանձնաժողովի անդամները և նախորդ տարվա հաղթող ճանաչված դասախոսները մրցույթին մասնակցել չեն կարող։

8. Մրցույթն ունի երկու բաղադրիչ՝ մրցանակակիրների ընտրություն և դասընթացների տեսաձայնագրում՝ լավագույն փորձի տարածման նպատակով.

1) մրցանակակիրների ընտրությունն իրականացվում է մրցութային ուսումնական տարվա մայիսի վերջին տասնօրյակում՝ մրցույթի արդյունքների հիման վրա,
2) տեսաձայնագրումն իրականացվում է մրցութային ուստարվան հաջորդող ուսումնական տարում՝ մրցանակակրի կողմից առաջարկված մեկ մոդուլի համար։

3. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

9. Յուրաքանչյուր անվանակարգում մրցանակակրին ընտրելու նպատակով ձևավորվում է առանձին հանձնաժողով, որի կազմը (յոթ հոգի) հաստատվում է ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով՝ ֆակուլտետի գիտական խորհրդի ներկայացմամբ։

10. Մրցույթի մասնակիցների (թեկնածուների) առաջադրման, մրցանակակրի ընտրության և այլ կազմակերպական աշխատանքների կատարման նպատակով Հանձնաժողովը հրավիրում է նիստեր։ Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը։ Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ։

11. Հանձնաժողովի անդամները հանձնաժողովի հերթական նիստի հրավիրման մասին տեղեկացվում են ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, իսկ արտահերթ նիստի հրավիրման մասին՝ ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օր առաջ։

12. Հանձնաժողովի նիստերի հրավիրման մասին Հանձնաժողովի անդամները տեղեկացվում են հեռախոսով և էլեկտրոնային հաղորդագրությամբ։ Անհնարության դեպքում Հանձնաժողովի անդամը(անդամները) նիստին կարող են մասնակցել հեռավար։ Հանձնաժողովի բոլոր նիստերն արձանագրվում են։

13. Մրցանակակրի վերաբերյալ հանձնաժողովի որոշումները մինչև մրցանակաբաշխության անցկացման օրը ենթակա չեն հրապարակման։

14. Իր գործունեությունն արդյունավետ իրականացնելու նպատակով Հանձնաժողովն իրավասու է կատարելու դասալսումներ և Հանձնաժողովի

աշխատանքներում ներգրավելու փորձագետներ։

15. Հանձնաժողովը դասալսումներն իրականացնում է մրցույթին մասնակցող թեկնածուի համար չնախատեսված կերպով։ Դասալսումները և դրանց վերլուծությունները տեղի են ունենում ըստ Հավելված 1–ում ներկայացված դասի գնահատման հարցաթերթի և դասալսման արդյունքների։

16. Թեկնածուները գնահատվում են 100 միավորանոց համակարգով՝ Աղյուսակ 1-ում ներկայացված չափանիշներին համապատասխան, որոնց համամասնությունները որոշվում են տնօրենի հրամանով։

Աղյուսակ 1

Գնահատման չափանիշներ	*Միավոր*
Ուսումնական տարվա ընթացքում դասավանդվող դասընթացների համար ուսանողների գնահատականները	
ժամանակակից դասավանդման մեթոդների օգտագործում	
Դասալսումների արդյունքներ	
Ուսումնամեթոդական ձեռնարկներ	

17. Մրցույթի արդյունքներով Հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

ա) տրված անվանակարգում մրցանակակիր ճանաչելու և մրցանակը շնորհելու մասին,

բ) մրցանակակիր չճանաչելու մասին[1],

18. Ներկայացված բոլոր դիմում-հայտերը մերժվելու դեպքում Հանձնաժողովն ընդունում է մրցույթը չկայացած համարելու մասին որոշում։

3. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Մրցույթի անցկացման պայմանների և թեկնածուների առաջադրման մասին

[1] Աղյուսակ 1-ում սահմանված գնահատման սանդղակի 80 տոկոսը չապահովելու դեպքում։

տեղեկատվությունը Հանձնաժողովը հայտարարում է մինչև ընթացիկ ուսումնական տարվա ապրիլի 1-ը։ Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով (դիմում-հայտի ձևը հաստատվում է Հանձնաժողովի կողմից)։

Հայտերի ներկայացման համար տրվում է մեկ ամիս ժամանակ։

20. Մրցույթին մասնակցելու համար դասախոսները Հանձնաժողովին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում-հայտ,
2) ինքնակենսագրություն (CV),
3) ընթացիկ ուսումնական տարում դասավանդվող դասընթացների ցանկ՝ հաստատված ամբիոնի վարիչի կողմից,
4) լսարանային գործունեության օրինակներ՝ ակտիվ ուսուցման և նորարարական մեթոդների օգտագործմամբ, ինչպես նաև առնվազն մեկ տեսաձայնագրված դասախոսության օրինակ,
5) ուսումնական տարվա ընթացքում դասավանդվող դասընթացների համար ուսանողների գնահատականները՝ որպես հետադարձ կապի արդյունքներ,
6) դասընթացի ընթացքում ուսանողների կողմից ներկայացված աշխատանքների օրինակներ (առկայության դեպքում),
7) դեկանի կամ ամբիոնի վարիչի կողմից աջակցության նամակ,
8) վերջին 5 տարվա ընթացքում դասավանդվող առարկաների թեմաների վերաբերյալ գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքներ (առկայության դեպքում),
9) վերջին 2 տարվա ընթացքում թեկնածուի դասերին մասնակցած ուսանողների աջակցության նամակ(ներ) (առկայության դեպքում),
10) ընթացիկ ուսումնական տարում դասավանդվող առնվազն երկու դասընթացների նյութեր՝ տեղադրված «E-learning» հարթակում։

11) { 11)-րդ ենթակետը ավելացվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2025թ. մարտի 29-ին հարցման միջոցով անցկացված նիստի 80/2 որոշմամբ} ընթացիկ ուսումնական տարում իրականացրած առնվազն երկու ակնարկային/թեմատիկ դասախոսությունների վերաբերյալ տեղեկանք Ուսումնամեթոդական վարչության կողմից։

21. Եթե մրցույթի մասնակիցը ներկայացրել է թերի կամ ոչ լիարժեք փաստաթղթեր, ապա Հանձնաժողովը տրամադրում է երկու աշխատանքային օր՝ թերությունները շտկելու և դիմումը կրկին ներկայացնելու համար։ Եթե մրցույթի մասնակիցը նշված ժամկետում ներկայացնում է ճշգրտված փաստաթղթերը, ապա դիմումը համարվում է ընդունված սկզբնական ներկայացման օրը։ Եթե մրցույթի մասնակիցը նշված ժամկետում չի շտկում թերությունները և կրկին չի ներկայացնում դիմումը կամ ներկայացնում է թերությունները չշտկված, ապա նրա դիմում-հայտը համարվում է մերժված։

4. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

22. Մրցանակակիրների պարգևատրումը կատարվում է մրցանակաբաշխության արարողության ընթացքում։

23. 1-4 կետերով մրցանակակիրներից երեքին տրվում է հավաստագիր և պարգևատրում 100.000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, իսկ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի հաղթողին՝ հավաստագիր և պարգևատրում 300.000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը։

24. Մրցանակակիրները հնարավորություն ունեն տեսաձայնագրել մեկ կրթական մոդուլ, որի կատարման դեպքում յուրաքանչյուրին վճարվում է պարգևատրում՝ 1 000 000 ՀՀ դրամի չափով՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը։

5. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

25. Սույն կարգը հաստատում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը:

26. Կարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ.

1) տնօրենի,
2) գիտական խորհրդի անդամների,
3) գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի առաջարկությամբ:

Հավելված 1

ԴԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Դասախոս_____

Դասընթացի անվանումը _____

Ուատարի _____

Դասալսող/ներ/ _____

Ուսանողների քանակ _____

Ամսաթիվ_____/_____/_____

Գնահատման սանդղակ.

4— իրականացվել է գերազանց,

3— իրականացվել է լավ,

2— իրականացվել է որոշակիորեն,

1— իրականացվել է ոչ այդքան լավ,

0— չի դիտվել/դժվար է գնահատել։

	Դիտման ասպեկտները	Գնահատական				
	1. Նախաբան և կողմնորոշում					
1.	Բացատրում է նյութի նպատակն ու խնդիրները	4	3	2	1	0
2.	Ներկայացնում է նախորդ նյութի հետ կապը	4	3	2	1	0
3.	Բացատրում է առարկայի դասընթացի մեջ տվյալ նյութի տեղը	4	3	2	1	0
	2. *Ուսանողների ներգրավվածություն.*					
4.	Հարց է տալիս և սպասում պատասխանի	4	3	2	1	0
5.	Համակարգում և ուղղորդում է քննարկումը	4	3	2	1	0
6.	Առաջարկում է ուսանողներին մասնակցել հարցի քննարկմանը	4	3	2	1	0

	3. *Վերաբերմունք*					
7.	Ոգևորված է առարկայով դասընթացով	4	3	2	1	0
8.	Ուսանողների մոտ հետաքրքրություն է առաջացնում առարկայի դասընթացի հանդեպ	4	3	2	1	0
9.	Ուսանողների հետ կապն անմիջական է և հարգալից	4	3	2	1	0
	4. Դասավանդման մեթոդ					
10.	Օգտագործում է տեսաձայնագրված նյութ (օր.՝ օր/ամ/տ), ուսումնաօժանդակ նյութեր, սարքեր	4	3	2	1	0
11.	Կիրառում է դասավանդման տարբեր մեթոդներ, որոնց շնորհիվ հասնում է իր նպատակին	4	3	2	1	0
12.	Շեշտադրում է նյութի հատվածների միջև անցումները	4	3	2	1	0
13.	Շեշտադրում է գլխավորը, հիմնարարը	4	3	2	1	0
14.	Բացատրում է հստակ և համոզիչ	4	3	2	1	0
15.	Կիրառում է կոնկրետ և պրակտիկ օրինակներ	4	3	2	1	0
16.	Հանձնարարված ինքնուրույն աշխատանքի նյութերը սերտորեն կապակցված են մատուցված նյութի հետ	4	3	2	1	0
17.	Ունի ձևավորված խոսքի մշակույթ	4	3	2	1	0
	5. Ամփոփում					
18.	Դասն ամփոփում է և անում եզրահանգումներ	4	3	2	1	0
19.	Պատասխանում է հարցերին	4	3	2	1	0
20.	Լսարան է մտնում և դասն ավարտում է ժամանակին	4	3	2	1	0

Լրացուցիչ մեկնաբանություններ